




Գ. ՀԱՎՈՐՅԱՆ

ՀԱՅ ԱՌԱՋԻՆ ԲԱՆԱՍՏԵՂԵՐ՝ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅ

Մեր ազգային ավանդությունը և պատմական որոշ գրավոր տվյալներ ինքնուրույն հայերեն շարականների և հոգևոր երգերի հին եղանակների գյուտը և կարգավորումը արդարորեն վերագրում են Ս. Սահակին և Ս. Մեսրոպին: Գրերի գյուտից հետո, երբ հիմք դրվեց մեր գրավոր մատենագրության, անհրաժեշտ էր ազգայնացնել նաև Հայ Եկեղեցու ժամերգությունը: Այդ գործի համար հարկավոր էր նախ և առաջ ունենալ ազգային հոգևոր երգեր: Քրիստոնեության սկզբի դարերում, ինչպես մյուս քրիստոնյա ժողովուրդների, այնպես էլ Հայոց Եկեղեցում, առանձին, ազգային հոգևոր երգեր չեն եղել, այլ դրանց նախորդել են ութ կանոն սաղմոսները, ըստ որում ժամերգության հիմնական մասը սաղմոսներգությունն էր:

Երբ հիմք է դրվում մեր ազգային գրականության, ժամերգության մեջ ընդունված և օտար լեզվով երգվող վերոհիշյալ սաղմոսները աստիճանաբար փոխարինվում են նոր, փոքրիկ, բայց ազգային հոգևոր երգերով: Ինչպես Հայ Եկեղեցու մյուս արարողություններն ու ծեսերը, այնպես էլ հոգևոր երգը, Ե դարի առաջին տասնամյակներից սկսում են ազգայնանալ: Նոր հորինված երգերը կատարվում էին Ս. Գրքի օրհնություններից և

կոչվում էին կցուրդ: «Այդ նոր երգերը,— ասում է պրոֆ. Մանուկ Արեղյանը,— իրենց նյութն առնում են Աստվածաշնչից և սաղմոսների ու մարգարեական օրհնությունների քնարական տարրը որոշում է նրանց ոգին: Դրանք հորինվում են նույնիսկ Ս. Գրքի բառերով: Այդպես է եղել հոգևոր երգի ծագումն ու վիճակը Ընդհանուր Եկեղեցու մեջ այն ժամանակ, երբ լինում է հայոց գրերի գյուտը և հիմք է դրվում մեր գրականության»¹: Ահա այդ կցուրդ կոչված երգերի հիմքի վրա են կառուցվում ու զարգանում մեր ազգային հոգևոր երգերը՝ շարականները:

Որոշ ժամանակ անցնելուց հետո, երբ այդ կցուրդները դառնում են ինքնուրույն, ընդունվում են ժամկարգության մեջ, արդեն ութ կանոն սաղմոսների փոխարինում են ութ տեսակ շարականներ՝ ութ ձայնով և երկու ստեղծումով: Այդ ութ կանոն շարականները հետևյալներն են. «Օրհնություն», «Հարց», «Մեծացուցէ», «Ողորմեա», «Մանկունք», «Տէր յիրկնից», «Ծաշու» և «Համբարձի»:

Շարականներից հետո, աստիճանաբար առաջ եկան և զարգացան հոգևոր երգերի ուրիշ

¹ Մ. Արեղյան, «Հայոց հին գրականության պատմություն», Ա, էջ 475:

տեսակները ևս՝ տաղեր, գանձեր և ավետիսներ՝ իրենց առանձնահատուկ բովանդակությամբ ու կառուցվածքով, առանձին եղանակներով, որոնք երգվում էին հանդիսավոր ժամերգությունների ժամանակ: Ահա այսպես ծագեց, դարգացավ ու ազդայնացավ մեր հոգևոր երգերի հարուստ տեսակը՝ իր բաղմազան, քաղցրահնչյուն եղանակներով: «Եթե հայոց բոլոր հոգևոր երգերի եղանակները միմյանց հետ գումարենք,— գրում է երաժշտագետ Կոմիտաս վարդապետը,— ուրեմն և շարականներինը կլինի 200»²: Մեր առաջին շարականագիրներն են Ս. Սահակը և Մեսրոպ Մաշտոցը: Երբ ձեռնարկվեց հայացնելու եկեղեցական ժամերգությունը, Մաշտոցը առաջինը գրեց Մեծ պահքի վեց շաբաթների ապաշխարության շարականները, իսկ Ավագ շաբաթի կարգը վերագրվում է Ս. Սահակին: Բացի ավանդությունից, մի քանի ուրիշ գրավոր փաստեր էլ կան, որ վերոհիշյալ շարականները գրել է Ս. Մեսրոպը:

Մեր Շարակնոցը դարերի ընթացքում հավաքվել է բազմաթիվ ձեռագրերից և խմբագրվել մի քանի անգամ (Հովհաննես Մանդակունին՝ Ե դարում, Ճոնընտիրը՝ Է դարում, Ստեփանոս Սյունեցին՝ Ը դարում, Ներսես Շնորհալին՝ ԺԲ դարում, Գրիգոր Տաթևացին՝ ԺԴ դարում և այլն): Ձեռագիր թե տպագիր Շարակնոցը ունեցել է մի փոքրիկ առաջաբան, ուր ցույց է տրվում, թե ե՞րբ, ո՞ր հիշիւնակը, ի՞նչ շարականներ է գրել: Այդ առաջաբանի մեջ հենց սկզբից կարդում ենք. «Եւ Մեսրոպ զկարգն ապաշխարութեան»³:

ԺԲ դարի գրել Կարապետ եպիսկոպոս Սասնեցին իր «Յաղագս վարուց և մահուան Սուրբ և երջանիկ վարդապետին Մեսրոպայ թարգմանչի և ուսուցչի» երկի մեջ, Մեսրոպ Մաշտոցի գրած շարականների մասին ասում է. «Եւ շարաբան եղանակ Ապաշխարութեան՝ ըստ թուոյ աւուրց պահոցն, զորս ընկալեալ երգէ զեկեղեցի սուրբ...»⁴: Խաչատուր անունով գրիչը 1312 թվականին գրած մի հիշատակարանում հաղորդում է հետևյալը. «Կանովն Ապաշխարութեան յուս Մեսրոպ վարդապետի է ասացեալ»⁵: Հիմնվելով ձեռագրերի և «Յալամատուր»-ի հաղորդածների վրա, հմուտ շարականագետ Հ. Գ. Ավետիքյանը իր «Բացատրութիւն շարականաց» բազմավաստակ գրքում Մեսրոպ Մաշտոցին վերագրվող շարականների մասին խոսելիս գրում է.

«Մեծն Մեսրոպ ասաց զկարգն Ապաշխարութեան»⁶:

Վերջապես հենվելով մոտ 70 ձեռագրերի հաղորդումների վրա՝ շարականների մասնագետ Սահակ վարդապետ Ամատունին Մաշտոցի գրած շարականների խնդիրը քննելիս գալիս է հետևյալ եզրակացության. «Շարականների հեղինակների գրական գործերին քաջածանոթ գրիչները Ապաշխարության շարականները միաձայն ընծայում են Մեսրոպ թարգմանչին»⁷:

Ինչպես տեսնում ենք, թե՛ ավանդությունը և թե՛ գրավոր տվյալները հաղորդում են, որ Ապաշխարության ամբողջ կանոնը գրել է Մեսրոպ Մաշտոցը՝ ըստ որում այդ շարականների տեքստերի հետ հորինել է և դրանց եղանակները ու կարգավորել: Այդ մասին շարականի առաջաբանը հաղորդում է հետևյալը. «Նախ Սուրբ Իսահակ և Սուրբ Մեսրոպ ասացին դուքն եղանակաւոր ձայնս և զերկու ձայն ստեղծիս»⁸: Բայց արդյո՞ք Ապաշխարության կանոնի մեջ մտնող բոլոր շարականները միայն Մեսրոպ Մաշտոցն է գրել: Չէ՞ որ այդ կանոնի մեջ մտնող բազմաթիվ շարականներ ձևով ու բովանդակությամբ շատ են տարբերվում: Երկրորդ, որ կանոնը Հայոց եկեղեցու ժամակարգության մեջ մտել է Ը դարում, Ստեփանոս Սյունեցու ձեռքով, հետևաբար, Ապաշխարության ամբողջ կանոնը Մեսրոպ Մաշտոցը չէր կարող գրել Ե դարում:

Եթե մեր ավանդությունը և գրավոր որոշ փաստեր Ապաշխարության շարականների ամբողջ կանոնը վերագրում են Մեսրոպ Մաշտոցին, ապա պետք է ենթադրել, որ այդ կանոնի մեջ մեր նախնիները նկատի են ունեցել զխավորապես «Հարց»-երը, «Ողորմեա»-ները և «Տէր յերկնից»-ները, որոնք իրոք ապաշխարողական են և պատկանում են Մեսրոպ Մաշտոցի գրչին և մեր բանասիրության մեջ առաջմ աղպես էլ ընդունված է⁹:

Ինչպե՞ս բացատրել այս անհամապատասխանությունը: Եթե Մաշտոցը գրել է միայն «Ողորմեա»-ները, «Հարց»-երը և «Տէր յերկնից»-ները, ապա ավանդությունը և վերևում հիշված գրավոր աղբյուրները ինչո՞ւ ամբողջ կանոնն են հատկացնում Մեսրոպին: Հարց է առաջանում՝ թե՛ ապա ո՞վ է գրել Կանոնի մնացած տեսակները՝ «Օրհնութիւն»-

⁶ Հ. Գ. Ավետիքյան, «Բացատրութիւն շարականաց», Կենտրոն, 1990, էջ 2:

⁷ Սահակ վարդապետ Ամատունի, հիշված աշխատությունը, էջ 81:

⁸ «Ձայնբաղ շարական», էջ 3:

⁹ «Արարատ», 1912 թ. և Մ. Արեղյան, հիշված աշխատությունը, Ա, էջ 425:

² Ս. սահակագ Սողոմոնյան, «Արարատ», 1894 թ., էջ 260:

³ «Ձայնբաղ շարական», էջմիածին, 1833 թ., էջ 3:

⁴ Սահակ վարդապետ Ամատունի, «Հին և նոր պարականոն շարականներ», էջմիածին, 1909, էջ 81:

⁵ Նույն տեղում:



ները, «Մանկունք»-ները, «Մեծացուցե՛ք»-ները և «Համբարձի»-ները¹⁰:

Այսինքն օրհնություններից: Ապաշխարութեան ուժի ձայնի օրհնությունները շատ են տարբերվում տեղական և սրբերի տոներին հատկացված օրհնություններից: Վերջիններս որոշակի իմաստ ունեցող, մեծ մասամբ ինքնուրույն շարականներ են: Բայց Ապաշխարության օրհնությունները ինքնուրույն գործեր չեն, այլ տարբեր շարականների «պատկերներ» կամ հատվածների (5—8 հատված և ամեն հատվածը՝ 3—4 տնից բաղկացած) միացություն են: Ի՞նչպիսի հատվածներից, և ո՞ւմ գրած շրականներից են կազմված դրանք: Ապաշխարության օրհնությունները Մեսրոպ Մաշտոցի գրածներն են, կազմված Ապաշխարության կանոնի մեջ դրված «Ողորմեա»-ներից, որոնց բոլորի հեղինակն էլ Մեսրոպ Մաշտոցն է: Ահա փաստերը: Մեծ պահոց առաջին ձայն (ած) օրհնությունը կազմված է առաջին շաբաթի Ապաշխարության 6 «Ողորմեա»-ներից, որոնք են՝ «Հայր բազումողորմ», «Աստուած բազումողորմ», «Ի նեղութեան իմում», «Ջղջման իմոյ դարտասուս», «Վտանգիմ ի բազմութենէ մեղաց» և «Ողորմեա ինձ Աստուած»: Սրանք միացել և կազմել են Ապաշխարության կանոնում եղած օրհնությունը:

Այսպես են և մնացած բոլոր 7 օրհնությունները, որոնցից երկրորդը կազմված է երկրորդ շաբաթի 7 «Ողորմեա»-ներից. երրորդը՝ երրորդ շաբաթի 5 «Ողորմեա»-ներից, չորրորդը՝ այս շաբաթի 8 «Ողորմեա»-ներից, հինգերորդը՝ 7, վեցերորդը՝ 7, յոթերորդը՝ 6 և ութերորդը՝ 6 «Ողորմեա»-ներից:

Այսպիսով, Կանոնի մեջ մտնող Ապաշխարության այս 8 օրհնությունները ուրիշ բան չեն, եթե ոչ Մեսրոպ Մաշտոցի «Ողորմեա»-ները: Ուրեմն, օրհնություններն էլ պատկանում են Մեսրոպի գրչին, հետևաբար նա գրել է Ապաշխարության կանոնի ոչ թե երեք, այլ չորս տեսակի շարականներ՝ եթե օրհնությունը այստեղ նկատի առնենք որպես առանձին տեսակ: Իսկ մնացած տեսակների՝ «Մեծացուցե՛ք»-ների, «Մանկունք»-ների և «Համբարձի»-ների մասին կիսովի իր տեղում:

Ցավոք պետք է ասել, որ Մեսրոպի գրական, մանկավարժական և առհասարակ հայ մշակութային մատուցած ծառայության մասին խոսելիս, մեր բանասերներն ու գրականագետները աչքաթող են արել նրա գրած շարականները, որոնք մի քանի տասնյակների են

հասնում: Մաշտոցի գրած հոգևոր երգերի վերաբերյալ առաջին անգամ պրոֆ. Մանուկ Աբեղյանն է գրել 1912 թվականին «Արարատ» ամսագրում, այն էլ ոչ թե բոլորի, այլ միայն «Ողորմեա»-ներից մի երկուսի մասին: Եթե ընդունենք, որ Ապաշխարության կանոնում եղած շարականներից Մեսրոպ Մաշտոցի գրչին են պատկանում միայն վերոհիշյալ 3 տեսակները («Հարց», «Ողորմեա» և «Տէր յերկնից»), այս դեպքում էլ նրա գրած շարականների թիվը հարյուրից ավելի կլինի: Ապաշխարության կանոնի մեջ կա 44 «Հարց», 44 «Ողորմեա» և 44 էլ «Տէր յերկնից»։ Երեքը միասին 132 շարական: Սրանցից ամեն մեկը բաղկացած է 3 տնից, իսկ ամեն մի տունը՝ երկուսից մինչև հինգ տողից:

Արդ, նախ ծանոթանանք Մեսրոպ Մաշտոցի գրած վերոհիշյալ շարականների ձևին, բովանդակության և արվեստին, ապա խոսենք Ապաշխարության կանոնի մասին ընդհանրապես:

«Հարց»-եր. — Ամեն մի «Հարց»-ը կազմված է երեք փոքրիկ տնից և գործատնից: Վերջինս «Հարց»-ի մի մասն է կազմում և նույնպես բաղկացած է երեք տնից: Ոչ միայն Ապաշխարության, այլ և մեր Շարականցի բոլոր կանոններում եղած «Հարց»-երն ունեն իրենց հարասությունն ու դարձը: Հարասությունն սկսվում է սկզբից այսպես, «Օրհնեալ ես Տէր Աստուած հարցն մերոց» բնաբանով և ապա երգվում «Հարց»-ի երեք տները: Դարձերը կրկնվում են ամեն մի տան վերջում՝ «Աստուած հարցն մերոց» բառերով: Ահա մոտավորապես այսպես են կառուցված «Հարց»-երը:

Ապաշխարության կանոնի բուն «Հարց»-ի երեք տները սովորաբար, մեծ մասամբ պատկանում են Բաբելոնի երից մանկանց պատմությունը: «Հարց»-երն ունեն գլխավորապես օրհնաբանական և ապաշխարակալան բնույթ, իսկ «գործատուն»-ը՝ ներբողական և փառաբանական: Շատ հաճախ բուն «Հարց»-ը և «գործատուն»-ը ներքին իմաստով, կամ շատ քիչ, և կամ երբեմն էլ բոլորովին իրար հետ չեն կապվում, սակայն որպես ընդունված կարգ, «գործատուն»-ը միշտ երգվում է «Հարց»-ի հետ, հաճախ տարբեր եղանակով ու տեմպով: Ահա Մեսրոպ Մաշտոցին ընծայված Ապաշխարության «Հարց»-երից մեկը, իր «գործատնով».

Բաւն «Հարց»-ը.

Որ ապրեցուցիր զերիս մանկուսն ի հոցին,
Եւ զիս ապրեցոյ յահագին հրոյն.
Աստուած, հարցըն մերոց:

Որք երգով օրհնութեամբ
Բզհուրն ի ցոյ փոխեցին.

¹⁰ Պետք է ասել, որ մյուս կանոնների մեջ մտնող «Ճաշու» կոչված շարականները Ապաշխարության կանոնի մեջ չեն մտնում, ուրեմն այս կանոնն ունի ոչ թե 8, այլ 7 տեսակ շարական:

Եւ զթագաւորն յամօթ արարին.

Ընդ նոսին օրհնեմք ըզբեզ,

Տէր Աստուած հարցն մերոց:

Աստուած, հարցն մերոց, զովեմք ըզբեզ,

Եւ առաւել բարձրացուցանեմք.

Որ զՄիաժինդ առաքեցեք՝ փրկել ըզմեզ.

Տէր Աստուած հարցն մերոց:

«Գործատուն»-ը.

Միաբանութեամբ տուք ըզփառս.

Եւ բարձր արարէք ըզնա յաւիտեան:

Որ ի բարձունքս բնակեալ է,

Ըզխոնարհքս տեսնողին,

Միաբանութեամբ տուք ըզփառս՝

Եւ բարձր արարէք ըզնա յաւիտեան:

Քաճանայք և պաշտօնեայք,

Երիտասարդք և կուսանք,

Անդադար զԱստուածն Աստուծոց, զովեցէք,

Եւ բարձր արարէք ըզնա յաւիտեան¹¹:

Թեև առաջին հայացքից թվում է, թե «Հարց»-ի և «գործատուն» մեջ մտքի կապը բացակայում է, բայց առաջին բովանդակության վարդապետական-օրհնաբանական գաղափարները միահյուսվելով երկրորդի փառաբանական կողմի հետ՝ «Հարց»-ին տվել են ապաշխարողական, խնդրողական բնույթ: Սակայն Մեսրոպ Մաշտոցի «Հարց»-ները այդ բնույթն ունենալով հանդերձ, միաժամանակ ունեն նաև գեղեցիկ, ազդու պատկերներ: Մաշտոցը թեպետ մեր առաջին շարականագիրն է, որը նոր էր հիմք դնում մեր հոգևոր բանաստեղծության, այնուամենայնիվ, նա համադրելով ապաշխարողական գաղափարը գեղեցիկ, պատկերավոր ձևերի հետ, վարպետորեն կարողացել է արտահայտել իր մտքերն ու զգացմունքները՝ մերթ ուղղակի և մերթ էլ այլաբանական պատկերներով: Ըստ վերևի «Հարց»-ի՝ Բաբելոնի երեք մանկունքը¹² ոչ միայն խոնկ չեն մատուցել նաբու-գոդոնոսոր արքայի շինած կուռքի ոսկե պատկերին, այլև, ասում է շարականը, «Զհուրըն բորբոքեալ մանկունքըն հաւատով շիջուցին»: «Որ սուրբուցեցեր» բառերով սկսվող այս «Հարց»-ի մեջ, ինչպես վերևում տեսանք, այդ նույն մանկունքը ահեղ, բորբոքված բոցերում եղած պահին իրենց

Երգով օրհնութեամբ ըզհուրն ի ցօղ փոխեցին.

Եւ ըզթագաւորն յամօթ արարին:

Մյուս տան մեջ բանաստեղծը, դիմելով բոցերից երեք մանկանց հրաշքով ազատող Հիսուսին, ասում է.

Որ ահաւոր քոյով զօրութեամբ

Յօդս ցօղաւորս փոխեցիր զբոց հնոցին:

Շարականի մեջ երկու դեպքում էլ բնությունից վերցված կենարար ցողի պատկերը հակադրվել է կործանարար կրակին, որն սպառնում էր երեք մանկանց կյանքին: Այս տիպի գեղեցիկ պատկերների հանդիպում ենք նաև «գործատուների» մեջ: Մեծ պահոց երկրորդ շաբաթվա ակ (առաջին կողմ) «Օրհնեալ և փառաւորեալ» «Հարց»-ի «գործատուն» մեջ շաբականագիրն ասում է, որ երբ Որդին երկնից իջել է բոցերի մեջ գտնվող երեք մանկանց օգնելու, այն ժամանակ բոց հնոցին ցօղանայր: «Հարց»-երի և «գործատուների» մեջ Մեսրոպ Մաշտոցի ամենասիրած պատկերն է եղել հուրը ցողի փոխվելու երևույթը: Օրինակ՝

Որ արարեր ողորմութիւն ի մէջ հնոցին

Եւ կենարար ցօղով քո փրկեցեր զերիս

մանկունսն («Հարց»):

Յօղէր ըզցօղ ողորմութեան,

Երկից մանկանցն ի հնոցին («Գործատուն»):

Որպեսզի ցույց տրվի, թե Բաբելոնի երեք մանկունքը իրենց հավատով ինչպես են հաղթել նաբուգոդոնոսոր գոռոզ արքային՝ «Փառաւորեալ յաւիտեան» աղցմի՝ «Հարց»-ի երրորդ տան մեջ Մաշտոցը գրում է.

Զհուրըն բորբոքեալ,

Մանկունքըն հաւատով շիջուցին.

Եւ պատկերի ոսկւոյ

Ոչ մատուցին խոնկըս:

Կամ՝

Որ ահաւոր քոյով զօրութեամբ

Յօդս ցօղաւորս փոխեցիր զբոց հնոցին:

Մի քանի հարցերում ապաշխարողական մոտիվների հետ համահավասար մեծ տեղ է տրված նրբորդության գաղափարին: Որպես օրինակ վերցնենք վառ ձայնի «Սուրբ Աստուած» «Հարց»-ը: Առաջին տան էութունն է՝ «Հայր անսկիզբն», երկրորդին՝ «Որդիդ Միածին» և երրորդին՝ «Սուրբ Աստուած Հոգիդ ճշմարիտ»: Մեսրոպ Մաշտոցի մի քանի «Հարց»-երի մեջ ապաշխարության և փառաբանության մոտիվների կողքին կան նաև խնդրանքներ՝ ուղղված Արարչին՝ բռնակալներից ազատվելու համար: Ապաշխարության

¹¹ Բուր մեջբերումները կատարել ենք 1833 թվականին էջմիածնում տպված «Զայնքաղ շարական»-ից:

¹² Եկեղեցական գրականության մեջ «մանկունք» բառը գործածվում է ոչ թե այժմյան առումով, այլ հավատացյալի, քրիստոնյայի իմաստով. ինչպես՝ «մանկունք եկեղեցւոյ», «մանկունք հաւատոյ», «մանկունք Սիօնի» և այլն:

երրորդ շաբաթի «Որ ահաւոր զօրութեամբ» «աղմցի» «Հարց»-ի վերջին տան մեջ շարականագիրը երկնքից փրկութիւն է խնդրում նաև աշխարհիկ, մարմնավոր կյանքի համար.

Ընդ երանելի մանկանցն երգեսցո՞ւր՝
ի նեղաց մերոց փրկեալ ըմբռն:

Հետագա դարերում, երբ մեր շարականներն ընդհանրապես անցնում են ձևի և բովանդակութեան զարգացման որոշ շրջան, Մեսրոպ Մաշտոցի հոգևոր երգերի հիման վրա, «Հարց»-երը ազատվում են ոչ միայն կցորդ լինելուց ու դրանց մեծ մասի միջից դուրս է ընկնում Բաբելոնի երից մանկանց թեման, այլև դրանք հարմարվում են Ազգային Եկեղեցու տերունական և մյուս տոներին և դառնում ինքնուրույն շարականներ: Ու թեպետ այդ կարգի «Հարց»-երը մինչև հիմա էլ պահել են սկզբի «Օրհնեալ ես Տէր» և վերջի «Աստուած հարցն մերոց» բառերը, սակայն դրանք բոլորովին էլ չեն կապվում հավուր պատշաճի «Հարց»-երի բուն էութեան հետ, այլ միայն ձևական բնույթ են կրում:

«Տէր յերկնից» շարականները. — Այժմ ծանոթանալով Մեսրոպ Մաշտոցի այս բանաստեղծութիւնների ձևին, բովանդակութեան և արվեստին: Այս խմբին պատկանող գրեթե բոլոր շարականներն էլ կապվում են «Հարց»-ի հետ, փառաբանական են, մեծ մասամբ «Օրհնեցէք զՏէր» և «Բարձր արարէք զնա յաւիտեան» դարձերով: Կառուցվածքի տեսակետից «Տէր յերկնից»-ները բնորոշ են նրանով, որ դրանցից մի քանիսը բաղկացած են ոչ թե երեք, այլ չորս տնից: Այսպիսի հորինվածք ունեն «Տուր զփառս Աստուծոյ», «Որ ի վերդ ես քան դամենայն ըզմիտս» և «Մի աստուածութիւն» երրորդութիւն անբաժանելի» շարականները: Սրանց մեջ կան և այնպիսիները, որոնք սակայն իրենց բովանդակութեամբ չեն կապվում «Հարց»-ի արտահայտած գաղափարի հետ: Որպես այդպիսին վերջիններ երրորդ շաբաթվա ավագ կողմ (ԲԿ) ստեղծի «Հարց»-ի «Տէր յերկնից»-ը: «Հարց»-ի գլխավոր գաղափարը երից մանկանց պատմութիւնն է, որը, իհարկե, չկա «Տէր յերկնից»-ի մեջ, այլ այստեղ առաջին տան մեջ ցույց է տրվում, թե ինչպես է օրհնաբանվում Աստված հրեշտակների կողմից, իսկ մնացածը խնդրվածքներ են: Այսպես.

Որ օրհնես ի հրեշտակաց անդադար,
Հայր երկնաւոր, ընկալ զաղաչանս մեր:

Երկրորդ տան մեջ արդեն խոսքը ոչ թե Հորը, այլ Փրկչին է ուղղված, որից թողութիւն է խնդրվում բազմաթիւ մեղքերի համար.

Առաջի քո անկանխմբ փրկիչ,
Խնդրեմք զթողութիւն բազում յանցանաց մերոց:

Իսկ երրորդ տան մեջ մարդկանց հոգիների գաղտնիքների խորքը ներթափանցող ու բացառաշատ Ս. Հոգու մասին է երգը: Չնայած «Տէր յերկնից» շարականները բարբառական և փառաբանական ոճով են գրված, տներին մի մասը բացականչութիւններ ու հորդորներ են, սրանք էլ ըստ էութեան ունեն ապաշխարողական ոգի.

Տէր, ըզլուր միտանդամ քո զալստեանդ,
Լուայ և Երկնայ, զի ուայ ի սրբոց պատուիրանաց,
Եթէ գաս դու՝ ի դատել զերկիր:

Այնուհետև բանաստեղծը հետևյալ տան մեջ բացատրում է, թե ինչու է զարհուրում Փրկչի երկրորդ գալուատից և վերջին դատաստանից.

Տէր, յիշցի դար ըզգործս իմ և զարհուրեցայ,
Զի ծանեայ ճշմարտութեամբ զահաւոր և զանաշառ
ըզքո դատաստանն:

Բայց, թեև ինքը Տիրոջ պատվիրանները խախտել է, կատարել է շար գործեր և դրա համար էլ սարսափում է անաշառ դատաստանից, այնուամենայնիւ էլ չի հուսահատվում.

Տէր, յիշցի և ըզգոթ արարչական սիրոյ քոյ,
Առ քո արարածս և ի քո զթողութիւնդ ապաւինալ՝
Աղաչեմ, ողորմեա ինձ յաւուր այնմիկ,
Քրիստոս, արդար դատաւոր:

Պարզ երևում է, որ այս «Տէր յերկնից» կողմից շարականը կորցրել է իր տեսակին հատուկ փառաբանական ոգին, էութեամբ գրեթե նույնացել է ապաշխարողական բնույթի «Հարց»-երի հետ: Մենք ունենք շատ «Օրհնութիւն»-ներ, «Հարց»-եր և «Տէր յերկնից»-ներ, որոնք թեպետ անունով և տեսակով տարբեր են համարվում, սակայն էութեամբ, ներքին բովանդակութեամբ ու ոգով գրեթե նույնն են: Ինչպես «Ողորմեա»-ների, այնպես էլ որոշ «Տէր յերկնից»-ների մեջ ապաշխարողական կողմը ուժեղանալով, դուրս է մղել փառաբանական ոգին և դարձել խնդրվածքների, զղջման և աղաչանքների բանաստեղծութիւն, որտեղ արդեն պարզ երևում է շարականի հեղինակը՝ իր ներքին խռովահույզ ապրումներով, լացով ու հույսով:

Ինչպես «Հարց»-երի, «Տէր յերկնից»-ների մեջ էլ տեղ են գտել Երրորդութեան հետ կապված գաղափարական գաղափարներ: Առաջին օրվա «Տէր յերկնից» շարականում հեղինակը գրում է.

Քեզ վայելէ Աստուած օրհնութիւն.
Զհայր և զորդի և ըզմորր Հոգիդ
Դո՛հութեամբ բարեբանեսցուք:

Երրորդութեան և նրա միասնութեան նվիր-
ված «Տէր յերկնից»-ները բաժանաճաճ
շատ են Ապաշխարութեան կանոնում: Սրանք
մշուա շարականների և մնացած «Տէր յերկ-
նից»-ների հետ համեմատած՝ արվեստով
թույլ են և միապաղաղ: Բայց սրանց մեջ
կան և այնպիսիները, որոնք գեղեցիկ են և
շատ նման են արձակ, լիրիկական բա-
նաստեղծութեան. օրինակ՝

Ընդ առաւօտս կանխեցից յանդիման լինել քեզ,
Թագաւոր իմ և Աստուած իմ:

Ընդ առաւօտս լուիցես ձայնի իմում, Տէր,
Թագաւոր իմ և Աստուած իմ:

Այսպիսի գեղեցիկ, քնարական մի երգ է
հինգերորդ շաբաթի շորորոդ ձայնի (ՊՃ)
«Հարց»-երից մեկը. այստեղ առաջին տան
մեջ բանաստեղծը օրհնաբանում է երկնա-
բնակ Արարչին, որին ինքը ապավինում է.

Որ ի բարձունքս բնակեալդ ես,
Եւ ի քեզ եմք ապաւինեալ.
Արարածք ամենայն օրհնեն զքեզ:

Երկրորդ տան մեջ էլ հրգվում է, որ Արա-
րչը միաժամանակ ներողամիտ և անհիշա-
շար է.

Որ մոլորելոց հովիւդ ես,
Դարձո ի մէնջ զցատումքն քո...

Եւ վերջապես՝ Տէրը ծարավների համար
ջուր է և մեղավորների մեղքերի քավիչ՝ ի-
հարկե միայն ապաշխարութեան միջոցով.

Որ ծարաւելոց աղբիւրդ ես,
Եւ քաւիչ ես մեղաւորաց:

Ինչպես «Հարց»-երը, այնպես էլ «Տէր յերկ-
նից»-ները դարերի ընթացքում մշակվել,
դարձել են բովանդակալից և ինքնուրույն,
անկախ երգեր:

«Ողորմեա»-ները. — Մեսրոպ Մաշտոցի
գրած հոգևոր երգերի երրորդ խումբը «Ողոր-
մեա»-ներն են, որոնք Դավթի սաղմոսների
ապաշխարողական ոգով են գրված: Սրանց
մեջ ավելի խոր և ուժեղ են հնչում զղջական
և աղաչական մոտիվները: «Ողորմեա»-ները
սրտաբուխ, անկեղծ, հոգեհույզ երգեր են:
Եթե «Հարց»-երն ու «Տէր յերկնից»-ները մեծ
մասամբ կաշկանդված են Ս. Գրքի հարասու-
թյուններով ու դարձերով, ապա «Ողոր-
մեա»-ները, նույնիսկ սկզբնական շրջանում,
անհամեմատ ազատ և ինքնուրույն են եղել՝
իրենց հորինվածքով, ոգով և ձևով: Այստեղ
ապաշխարողական մոտիվների մեջ միշտ

էլ երևացել է շարականագրի ներքնաշխարհը:
Պրոֆ. Մանուկ Աբեղյանը Մեսրոպ Մաշտոցի
գրած «Ողորմեա»-ներին հետևյալ գնահա-
տական է տվել. «Այս կարգի շարականները
սրտահույզ ողբեր են և ամենից գեղեցիկ-
ներն են»¹³:

Շարականների այս տեսակի մեջ իշխողը
քնարական տարրն է: Այստեղ ամենից առաջ
տիրապետողը մեղքի և զղջման զգացմունք-
ներն են, որոնք երգերի մեջ հորդում են ամեն
մի տողի միջից.

Մեղք իմ բազում են յոյժ՝
Մանր են քան դաւաղ ծովու...

Բաց, Տէր ըզդուռն ողորմութեան,
Որ ողբալով՝ կարդամ առ քեզ...

Հեղ յիս ըզգըթութիւնդ քո
Բաղումողորմ և մարգասէր:

Մեղքը որպես անբեկույթ, շար թշնամի,
վերք է բացել երգողի հոգու մեջ: Նա ոչ միայն
մարմնով է տանջվում, այլ հոգով էլ է հի-
վանդ: Եւ ահա հոգեկան և մարմնական այս
ծանր դրութիւնից ելք գտնելու համար, նա
դիմում է երկնավոր Հորը.

Վիրաւորեցայ ես յանբեկութիւնդ թշնամույն,
Բեժիչկ հիւանդաց, բեժիչկա զիմ զհիւանդութիւնս:

Այնուհետեւ, մի ուրիշ «Ողորմեա»-յի մեջ
բանաստեղծը իր աղերսանքները ուղղում է
Փրկչին: Աղաչանքների ու զղջման հետ միա-
ժամանակ, նա բացատրում է, որ ինքը մո-
լորեալ ոչխարներից մեկն է, պետք է գտնել,
փրկել իրեն և բժշկել հոգով.

Անկանիմ առաջի քո Քրիստոս, որ հովիւդ ես
բանաւոր հօտի,
Խնդրեա և զիս ըզմոլորեալս, որ միայնդ ես բազմազոթ:

Ըզմեզս իմ ցուցից քեզ Քրիստոս, որ բժիշկդ ես
հօգուց և տէր կենաց,
Բժշկեա և զիմ զհիւանդութիւնս, որ միայնդ ես
մարգասէր:

«Ողորմեա» երգի մեջ, թեև Փրկչի համար-
վում է բարեգութ, մարդասեր, բայց նա
հօր է և ահեղ, և առանց ապաշխարութեան
ու արցունքների չի ների:

Հեղինակը հորդ արցունքներով դիմում է
Տիրոջը.

Զղջման իմոյ զարտասուտ արկանեմ առաջի քո
Քրիստոս...

Աղաչեմ ըզքեզ Տէր, պարզեա ինձ՝
Ապաշխարութեամբ լուսեալ ըզմեզս իմ և ողորմեա:

Խորն է բանաստեղծի ապրած մեղքի զգա-
ցումը: Կյանքի ծովում նա մոլորվել է. նրան

¹³ Մ. Աբեղյան, հիշված աշխատությունը, Ա, էջ 491:

սպառնում է կործանում և դրա համար էլ նրա ողբերգությունը ավելի է խորանում: Իր հոգեհույզ վիճակը դրսևորելու համար, նա ծովից վերցնում է համապատասխան պատկերներ և այլաբանություններ.

Մով կենցաղույս հանապազ զիս արկածէ,
Մըրբերկեալ ալիք թշնամին ինձ յարուցանէ:
Նաւապետ բարի, լեր անձին իմոյ ապաւնէ:

Կամ²

Ի խորս մեղաց ծովու տարաբերեալ ծրփիմ,
Մով մեղաց իմոց զիս արկածէ.
Որ էս նաւապետ բարի, շորհեա ինձ

Նաւահանգիստ:

Եթե այստեղ զղջացող հոգին ընկել է մեղաց անհատակ ծովի հորձանքներում, սարսափում է մրկկյալ ալիքներին կեր գնալուց, աղաչում է բարի նավապետին, որ իրեն անվտանգ հասցնի նավահանգիստ, ապա ցամաքի վրա էլ նա հանգիստ չէ:

Այստեղ էլ անհրեւելի, չար որսողը նրան քաշում է անելանելի որոգայթի մեջ, անտես թշնամին նետահարում է նրա հոգին, նա աղերսագին խնդրում է Տիրոջը.

Ցաներևոյթ թըշնամույն և ի գաղտնի նետից.

պահեա.

Փըրկեա զիս... և նորոգեա զիս հոգւով գիտութեան:

Իսկ ինչու է զղջացողը այսքան սարսափում, ո՞րն է այդ ողբերգության հիմքը, և որտեղից են գալիս այդքան ծանր հոգեկան տանջանքները: Այդ ամենի պատճառը ահեղ դատաստանն է, որը և հանդիսանում է նրա բոլոր հոգեկան տանջանքների աղբյուրը: Այդ ահեղ օրվա երկյուղը ավելի ուժեղ և ավելի խորն է արտահայտվել «Ողորմեա»-ներից մի քանիսի մեջ.

Ի լռելի ըզձայն փողոյն ահագին աւուրն,
Յորժամ հարկանէ հրեշտակապետն և կոշէ ի
դատաստան,

Ողորմեա ինձ Աստուած:

Այդ սարսափելի, բայց և միաժամանակ արդարադատ ատյանում նստած է անաչառ դատավորը: Մարդիկ մեկ-մեկ մոտենում են նրան և հաշիվ տալիս իրենց աշխարհային գործերի մասին: Կատարվում է մանրամասն և սաստիկ քննություն.

Ի նստիլ բո յատնիի, դատաւոր ահեղ,
Յորժամ առնես հրափորձութեամբ զքննութիւն
որդւոց մարդկան,

Ողորմեա ինձ Աստուած:

Չկասկածելով, որ երկնային դատավորը որքան խիստ ու անաչառ է, այնքան էլ բարեգութ է և ներողամիտ է, այնուամենայնիվ

նրան տանջում է այն միտքը, որ ինքը բոլոր մեղքերը կամավոր, գիտակցաբար է գործել, որը հալսնի է բոլոր գաղտնիքները տեսնող դատավորին ու դրա համար էլ, գուցե Տիրոջ կողմից չներվի ինքը և բաժին դառնա դժոխային հավիտենական հրին: Ահա այս կասկածներն ու տանջանքները նրան երբեք հանգիստ չեն տալիս.

Զարհուրեալ դողացաւ ամենամեղ անձն իմ,
Ահեղ քոց դատաստանաց յանկերկի տանջանացն,
Քանզի կամաւ մեծեցայ ի մեղս մեծամեծս,
Արդ կայ և մնայ ինձ աններկի պատուհասն:

Բայց բանաստեղծը, վարանալով հանդերձ, չի հուսալքվում: Վերջին դատաստանի տանջող մտքերը հետզհետե տեղի են տալիս դարձյալ աղաչանքներին: Նա համոզված է, որ իր պաղատանքներին կանաա Անոխակալը: Այստեղ արդեն երբը ուղղվում է Հիսուսին, ոչ թե որպես դատավորի, այլ որպես Փրկչի, որը նմանեցված է մի փրկարար նավապետի՝ արկածված ծովում.

Նաւապետ բարի, լեր անձին իմոյ ապաւնէ...
Մերձ եմ լընկըմիլ, օգնեա ինձ նաւապետ բարի.
Քանզի ծանրացան ի վերայ իմ բեռինք մեղաց...
Փըրկեա ի վըտանգէ ըզնաւաբկս ի յալեաց ծովէ:

Մեսրոպ Մաշտոցը իր արկած հոգեկան դրուժյունը ներկայացնելու համար ընտրել է շատ հարմար միջոց՝ ծովից վերցված պատկերներ և այլաբանություններ: Առհասարակ, Ապաշխարության շարականներում ծովի, կրակի, ընկղմվելու, հրկիզվելու պատկերներն ու գաղափարները տիրապետող են: Մի ուրիշ «Ողորմեա»-յի մեջ ապաշխարողը նույն բարի նավապետից խնդրում է, որ ոչ միայն փրկի իրեն ընկղմվելուց, այլև անվտանգ դարձնի ճանապարհը և բարվոք հասցնի նավահանգիստ: Մովից հետո, որպես պատկեր և խոսքի գեղարվեստական միջոց, շարականագիրը օգտագործել է դարձյալ բնութային զինքը՝ ված մի ուրիշ առարկա կամ երևույթ՝ հողմը: Վերջինս նույնպես ահեղ է, ինչպես արհույզ ծովը: Բանաստեղծը երևակայում է, որ ինքը ընկած է հողմի երախում և նույնպես ենթակա է կործանման:

Վըտանգիմ ի բազմութենէ մեղաց իմոց...
Ալեկոծիմ հողմով անօրէնութեան իմոյ.
Քաղաւոր խաղաղութեան, օգնեա ինձ:

Վերջապես «Ողորմեա»-յի հեղինակը սրտի խորքից ցալում է, որ մոլորվել է աշխարհի ապականված կենցաղի խոտոր ու խավար ուղիներում. վատնել է անտեղի իր հոգու անապակ գանձերը, քանդել է իր հոգու պտղատու այգու ցանկը և նման է անպտղաբեր

որթի, ոստաքանդ արմավենու և պտղակորույս ձիթենու.

Ձանապական ըզհոգեոր ըզգանձն՝
Ցապականացու կենցաղըս ծախեցի...
Զցանկ հոգույ իմոյ բակտեցի,
Եւ հզէ անբարունակ որթ...
Ոստաքանդ հզէ ես որպէս զարմանի,
Պըտղակորույս որպէս ձիթենի...

Որքան շատ ու ծանր են մեղքերը, որքան ահնդ և զարհուրելի է դատաստանի ատյանը, այնքան էլ խորն ու հոգեմաշ են բանաստեղծի ապրումները: Սակայն, կա մի անխզելի կապ երկնքի ու մեղավոր մարդու միջև, որը թույլ չի տալիս, որ աղամորդին հավիտենապես խորտակվի. դա բանաստեղծի լավատեսութեան հիմքը հանդիսացող եռյակն է՝ հավատի անբաժան և փրկարար մասը.

Յոյս իմ ես դու Տէր, քալիշ յանցանաց իմոց,
Մի անտես առնել դրդիսման արտասուաց իմոց...

Դու ես յոյս և ապաւն իմ.

Ջերծ դիս յորոգայթէ մեղաց և Ողորմեա:

Ապաշխարութեան կանոնի մեջ մտնող շարականների մնացած տեսակները՝ «Մանկունք»-ները և «Համբարձի»-ներն են, որոնց հեղինակները հայտնի չեն: Այս շարականներից շատերը, իրենց վսեմ ոգով ու պարզութեամբ, շատ մոտ են Մաշտոցի գրած շարականներին, իսկ ոճով ու լեզվով հիշեցնում են մեր Ե դարի գեղեցիկ գրարարը՝ «Մանկունք»-ները վերագրվում են Պետրոս Գեղաղարին, Հովհաննես Սարկավազ վարդապետին և Շնորհալուին: Ինչ վերաբերում է «Համբարձի»-ներին, ապա դրանց վերաբերյալ շատ քիչ բան է հայտնի: Շարականացի առաջարանում Հովհան Մանդակունուն է վերագրվում «Անսկիզըն բանն Աստուած» «Համբարձի»-ն, «զոր ոմանք Օձնեցույն տան»: Այնուամենայնիւ, «Մանկունք»-ներն ու «Համբարձի»-ները, որպէս հոգեկոր երգի տեսակ, գոյութիւն են ունեցել և որոնցից շատերը, իրենց ձևով ու բովանդակությամբ, պարզութեամբ ու լեզվով շատ նման են Մաշտոցի գրած շարականներին և դրանք Ապաշխարութեան կանոնի մեջ ամենագեղեցիկներն են: Նմանութիւն ասելով պիտի նկատի ունենալ այստեղ դրանց ոգին, հուզականութիւնը, պատկերները և մանավանդ մեր ոսկեղենիկ, պարզ ու գեղեցիկ լեզուն:

Վերցնենք մի քանի օրինակ Մաշտոցի գրած «Ողորմեա»-ներից ու «Տէր յերկնից»-ներից և համեմատենք «Մեծացուցէ»-ների, «Մանկունք»-ների ու «Համբարձի»-ների հետ:

«Տէր յերկնից».

Առաւօտ խաղաղութեան ծագեալի մեղ մարդասիր և կեցոյ:

Եւ յամենայն վրտանդէ ամբարցո զմեղ
ընդ հովանեաւ աշուղ քո սրբոյ և կեցոյ:

Նույն կանոնի մեջ, նույն ոգով ու պարզութեամբ այդպիսի մի խնդիր է արվում Տիրոջը, հեղինակն անհայտ, հետևյալ «Համբարձի» շարականի մեջ.

Ջորհերգութիւնս՝ բանաւոր պատարագ,
Քեզ ի մըտանիւ արեգականըս վերադարձմք...

Յամենայն փորձութենէ թըշնամույն
Աշուղ քո պահպանեալ ըզմեղ...

«Ողորմեա»-ներից մեկում երգում է.

Ջերծ դիս յորոգայթէ որսողին,
Եւ յամենայն վրտանդից ապրեցո և ողորմեա:

Յաներևոյթ թշնամույն և ի զաղտնի նետից
Պահաւ և ողորմեա:

Ապաշխարութեան ավագ կողմ (ԲԿ)
«Հարց»-ի «Տէր յերկնից»-ներից մեկում
Մաշտոցը երգում է.

Ընդ առաւօտըս կանխեցից յանդիման
Կինել քեզ թագաւոր իմ և Աստուած իմ:

Ընդ առաւօտըս լուիցեա ձայնի իմում,
Տէր, թագաւոր իմ և Աստուած իմ:

Ապաշխարութեան առաջին ձայն (աձ)
«Հարց»-ի «Մանկունք»-ի մեջ ասում է.

Ձառաւօտու զօրհներգութիւնըս մարդասիրութեամբը քո
Ընկալ, թագաւոր փառաց,
Ձմանկունս եկեղեցույ քո պահաւ ի խաղաղութեան:

Ինչպէս տեսնում ենք, դիմումների ու խնդրանքների ձևը, ջերմեռանդ օրհներգութիւնների ոգին, պարզ ու անպաճույճ խոսքը, բոլորը այնքան մոտիկ ու նման են Մաշտոցի շարականների էութեանն ու ոգուն, պարզութեանն ու անկեղծութեանը:

Մեսրոպ Մաշտոցի շարականներում, որքան դառն են ու խոր մեղքի զգացման ծանր ապրումները, որքան հորդաուստ են զղջացող սրտից բխող արցունքները, նույնքան էլ այդ ծանր ապրումների միջից պայծառ է նրա վնէ հույսը, որը հանդիսանում է նրա վերածնվելու, մեղքերից աղաւթիլու ելքը: Նրա «Հայր բաղումողորմ», «Անբերութից քննող», «Բաղում են քո գըթութիւնքը», «Յոյս իմ ես դու», «Եկեացէ ի վերայ մեր ողորմութիւն քո», «Մաքսաւորն հառաչանօք ի տաճարին», («Ողորմեա») «Յորժամ գայցես» («Տէր յերկնից») շարականներում հետևողականորեն և հաստատ հավատով լեցուն, ամեն մի

տողի միջից երևում է հույսը, լավատեսությունը: Ահա այս շարականների հետևություններն ու ոգով էլ գրված են Ապաշխարության կանոնում գտնվող բազմաթիվ «Մանկունք»-ները և «Համբարձի»-ները: Վերցնենք դրանցից միայն երկու օրինակ: Կանոնի վառ ձայն «Համբարձի»-ն երգում է.

Պահա ղմեզ Տէր յամենայն փորձութենէ,
Ցանկերոյք թըշնամոյն և ի գաղտնի նետից նորա,
Դու յոյս մեր և ապաւն յամենայն ժամանակի:

Ավելի բուն ու ջերմ է հույսի ու հայցվածքների արտահայտությունը հետևյալ «Մանկունք»-ի մեջ.

Յոյս իմ ի մանկութենէ իմմէ,
Մի՛ թողոր զիս, Տէր Աստուած իմ:

Յոյս իմ ի ժամանակի ծերութեան իմոյ,
Մի՛ թողոր զիս, Տէր Աստուած իմ:

Յոյս իմ ի միասնգամ զալստեանդ քո,
Մի՛ անտես առնիր զիս, Տէր Աստուած իմ:

Մեսրոպ Մաշտոցի գրած առաջին շարականները մեծ դեր են խաղացել հայկական հոգևոր երգերի զարգացման բնագավառում: Պահպանելով Ապաշխարության շարականների ոգին, Մաշտոցի շարականների ազդեցությամբ հետագայում առաջ եկան «Ննջեցելոց» և «Հանգստեան» շարականների կանոնները: Այսպիսով, հետագա դարերի «Հանգստյան» կանոնի բոլոր շարականները ընթացել են Մաշտոցի բացած հետքերով:

Սրտաբուխ, ապաշխարողական մոտիվներով գրված այդ շարականներում, վսեմ ու հուզավարար բովանդակության հետ միաժամանակ, հանդես են եկել և հայկական սկզբնական տաղաչափական տարրերը: Թեև մեր բանասիրությունը հայկական առաջին ոտանավորը վերագրում է Մովսես Խորենացուն և Հովհան Մանդակունուն, սակայն Մաշտոցի շարականների, առանձնապես «Ողորմեա»-ների արվեստի ընձեռած փաստերը հաստատում են, որ մեր ազգային անդրանիկ ոտանավորի հիմնադիրն էլ այդ հանձարեղ Տարոնացին է եղել: Մեր հին հոգևոր երգերի մեջ բազմաթիվ են ձևով այնպիսիները, որոնք ազատ ոտանավորներ են՝ յամբական պարզ ոտքերով: Այս ձևը՝ յամբական պարզ ոտանավորը, առաջին անգամ Մեսրոպ Մաշտոցն է գործածել իր «Ողորմեա»-ներում: Ահա մի նմուշ այդ ձևի ոտանավորից.

Մեղք իմ բազում են յոյժ,
Մանր են քան ղառաղ ծովու.
Քանզի քեզ միայնոյ մեղայ,
Ողորմեա ինձ, Աստուած:

Մեսրոպ Մաշտոցի «Ողորմեա»-ների մեջ կան և ազատ ուղղական, յամբական ոտանավորներ, որոնք բավականաչափ շատ են մեր հոգևոր երգերում, ինչպես հետևյալ «Ողորմեա»-ն.

Ի նեղութեան իմում օգնեա ինձ, Տէր,
Որպէս երբեմն Յովնանու,
Եւ ողորմեա:

Մաշտոցի շարականներում, տաղաչափության տեսակետից ամենից ուշագրավը իշխող հնգավանկ անդամներով, խառն ոտանավորի ձևով գրված «Ողորմեա»-ներն են, որոնց հետագայում հանել են Ստեփանոս Սյունեցին, Գրիգոր Նարեկացին, Ներսես Շնորհալին և ուրիշները: Այս ձևի ոտանավորի բնորոշ հատկությունն այն է, որ նրա հիմնական անդամները հնգավանկ են: Բայց սրանց տողերի մեջ երբեմն հնգավանկ անդամների հետ լինում են նաև երկավանկ, եռավանկ և նույնիսկ յոթավանկ անդամներ: Այսպիսի ոտանավորի ձևով է գրված Մաշտոցի «Յոյս իմ ես դու» «Ողորմեա» շարականը.

Յոյս իմ ես դու, Տէր,
Քաւիշ / յանցանաց իմոց.
Մի՛ անտես առնիր
Ջրդրումն / արտառուաց իմոց.
Ողորմեա ինձ Աստուած:

Սակայն Մեսրոպ Մաշտոցին պատկանող բոլոր շարականների մեջ, իր արվեստով և տաղաչափությամբ ամենալավը «Ալիք յանցանաց զիս ալեկոծեն» «Ողորմեա»-ն է: Ընդհանուր է, սա էլ ապաշխարողական մյուս շարականների պես զղջական բովանդակություն ունի, բայց իր կաղմություններն ու արվեստով միանգամայն ինքնուրույն է: Կառուցվածքի տեսակետից էլ սա առանձնահատուկ է նրանով, որ ամեն մի տունը կաղմված է ոչ թե սովորական երեք-չորս տողերից և դարձից, այլ երկու տողից, այսպես.

Ալիք յանցանաց / զիս ալեկոծեն,
Եւ մեղք իմ բազում / զիս յանդիմանեն:

Արդ զի՞նչ արարից / մեղուցեալ անձամբու,
Որ չեմ ապրելոց / ահազին հրոյն:

Մեղայ քեզ, Քրիստոս, / Որդի Աստուծոյ,
Շնորհեա զթողութիւն / յանցանաց իմոց:

Մեսրոպ Մաշտոցի շարականները ցույց են տալիս, որ հանգի թեև սակավաթիվ, բայց գործածության դեպքեր եղել են նույնիսկ 6 դարի առաջին տասնամյակներում, այսինքն՝ նարեկացու հաղորդած ժամանակից շուրջ

վեց դար առաջ¹⁴։ Անհավանական չէ, որ դրանք կարող են մեր ժողովրդական անգիր բանահյուսությունից անցած լինել նույնիսկ մեր առաջին հոգևոր երգերի մեջ, որոնք հետագայում ավելի տարածվեցին ու զարգացան։ Մեր ասածները հիմնավորելու համար, բերենք մի քանի նմուշ Մեսրոպ Մաշտոցի այն շարականներից, որտեղ նկատվում են հանգի գործածության դեպքերը.

Ալեկոծիմ հողմով անօրենութեան,
Օգնեա ինձ թագաւոր խաղաղութեան:

Ըզմեղս իմ ցուցից քեզ Քրիստոս,
Որ բըժիշկըդ ես հոգւոց:

Ալիք յանցանաց դիս ալեկոծեն,
Եւ մեղք իմ բաղում դիս յանգիմանեն:

Վիրաւորեալ յանցանօք անձն իմ,
Առ քեզ Տէր, համբարձի զաշս իմ:

Յանկրկոյթ թըշնամույն պարտեցայ,
Եւ ի գաղտնի նկտից բանասրկուին վիրաւորեցայ:

Վտանգիմ ի բաղմութենէ մեղաց իմոց,
Աստուած խաղաղութեան, օգնեա ինձ:

Ալեկոծիմ հողմով ալեկոծութեան իմոյ,
Թագաւոր խաղաղութեան օգնեա ինձ:

Ինչպես տեսնում ենք, հայ գրականության մեջ տաղաչափական և հանգի տարրերը շատ հին են և ազգային։ Դրանք սկզբնավորվել են մեր գրի ու գրականության հետ միաժամանակ և հանդիսանում են հայ մշակույթի և ազգային բանավոր ու գրավոր գրականության անբաժանելի մի մասը։ Հետևաբար տաղաչափական և հանգային տարրերը մենք ընդունել ենք ոչ թե ուրիշ ազգերի բանաստեղծությունների ու տաղաչափության ազդեցությամբ, այլ դրանք մեր ազգային մշակույթի ներքին տարրերն են, որոնք երևան են եկել տակավին Ե դարի սկզբներում։

Վերևում բերված փաստերը ցույց են տալիս, որ Մեսրոպ Մաշտոցը, այդ հանճարեղ Սուրբը, եղել է ոչ միայն մեր գրի ու գրականության, այլև ազգային հոգևոր բանաստեղծության ու նրա տաղաչափական արվեստի հիմնադիրը։ Նա առաջինը գրեց մեր հոգևոր կրթը, ինքը եղանակավորեց և ինքն էլ առաջինը երգեց հայերեն լեզվով։

¹⁴ Մ. Արեղյան, «Տաղաչափություն», էջ 414:

